ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ դեկտեմբերի 2021 թվականի №___Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ №40 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՏԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի Վահան Տերյան փողոցի №40 հասցեում կառուցվող տան (այսուհետ՝ Առանձնատուն) սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացումն առանց միացման վճարի գանձման իրականացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 19-ի №Ե-626-21 գրությունը,

բ) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, որի համաձայն՝ քաղաքացի Արթուր Գևորգյանը (այսուհետ՝ Դիմող անձ) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի Վահան Տերյան փողոցի №40 հողամասի սեփականատեր,

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի սոցիալական աջակցության տարածքային գործակալության 2021 թվականի սեպտեմբերի 17-ի №2239 տեղեկանքը, որի համաձայն՝ Դիմող անձը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և նրա ընտանիքի անապահովության միավորը կազմում է 34.96,

դ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի նոյեմբերի 4-ի №Ե-669-21 և Դիմող անձի 2021 թվականի նոյեմբերի 16-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Առանձնատան սպառման

համակարգի՝ էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել, որ Առանձնատան սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու դեպքում միացման վճար չի գանձվում:
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
___ դեկտեմբերի 2021թ.